ԱՄՓՈՓՈՒՄ
ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՋՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ
2023 ԹՎԱԿԱՆԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ

ՆԱԽԱԲԱՆ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), առաջնորդվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի կանխարգելման ջանքերն առավել թիրախային և արդյունավետ դարձնելու նպատակով 2021 թվականից իրականացնում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց անհամատեղելիության պահանջների պահպանման ստուգում: Նշված գործառույթի ապահովման նպատակով՝ 2023 թվականին Հանձնաժողովի կողմից իրականացվել է անհամատեղելիության պահանջների պահպանման մշտադիտարկում (այսուհետ՝ Մշտադիտարկում):

Մշտադիտարկումն իրականացվել է Հանձնաժողովի կողմից սահմանված ռիսկային ցուցիչների հիման վրա՝ նախապես հաստատած պետական մարմինների/պաշտոնների շրջանում:

ՆՊԱՏԱԿ

Մշտադիտարկումը նպատակ է ունեցել հայտարարատու պաշտոնատար անձանց շահերի հայտարարագրերի վերլուծության և Հանձնաժողովին հասանելի պետական տեղեկատվական շտեմարանների, ինչպես նաև բաց աղբյուրների տվյալների համադրության միջոցով դուրս բերել գործադիր իշխանության մարմիններում ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց շրջանում անհամատեղելիության պահանջների խախտումները, վերլուծել խախտումների բնույթը և հնարավոր պատճառները և, որպես վերջնանպատակ, ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ համանման խախտումների հետագա կանխարգելման ուղղությամբ: Գործընթացը միտված է նաև հանրային ծառայության ընդհանուր համակարգում բարեվարքության իրավիճակի

վերաբերյալ պատկերացում ձևավորելուն, օրենսդրությամբ սահմանված պահանջների վերաբերյալ իրազեկվածության աստիճանը գնահատելուն և Հանձնաժողովի գործունեության շրջանակներում ի հայտ եկած խնդիրները հասցեագրելուն:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Մշտադիտարկման իրականացման համար հիմք են ծառայել Հանձնաժողովի՝ Օրենքով սահմանված լիազորությունները և Հայաստանի Հանրապետության ստանձնած՝ վերաբերելի միջազգային պարտավորությունները:

Մասնավորապես, Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հանձնաժողովին, կանխարգելման մանդատի շրջանակներում, տրվել է լիազորություն՝ հետևելու պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից Օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահպանմանը:

Միաժամանակ, պետական պաշտոն զբաղեցնող անձանց շրջանակի ընտրության իմաստով՝ Հանձնաժողովը կարևոր է համարել Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) գնահատման 5-րդ շրջափուլի զեկույցի նախագծով նախանշված պաշտոնները, որոնք այս փուլում ընդգրկում են կառավարման կենտրոնական ապարատում բարձրագույն գործադիր պաշտոն զբաղեցնող անձանց և անդրադառնում վերջիններիս շրջանում կոռուպցիայի կանխարգելմանը և բարեվարքության խթանմանը:

Մշտադիտարկման ենթակա սուբյեկտների շրջանակը բնականորեն համընկնում է նաև 2023 թվականի ընթացքում Հանձնաժողով հասցեագրվող դիմում-գրությունների և ուսումնասիրվող մեդիա հրապարակումների սուբյեկտների շրջանակի հետ:

Այսպիսով, Հանձնաժողովի կողմից 2023 թվականին անհամատեղելիության պահանջների մշտադիտարկում իրականացնելու նպատակով որպես թիրախային խումբ սահմանվել է գործադիր իշխանության՝ **կառավարության,**

կառավարության ենթակա մարմինների, վարչապետի ենթակա մարմինների ղեկավար կազմը (սահմանված է Մշտադիտարկման պլանի հավելվածով)՝ ընդհանուր թվով **108 պաշտոն զբաղեցնող անձ**:

ՌԻՍԿԱՅԻՆ ՑՈՒՑԻՉՆԵՐ

Հաշվի առնելով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար անհամատեղելիության պահանջների պահպանման օրենսդրությամբ սահմանված պահանջները և, հատկապես, «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածով սահմանված՝ այլ պաշտոններ զբաղեցնելու և այլ գործունեություն իրականացնելու սահմանափակումները՝ Հանձնաժողովը, որպես ռիսկային ցուցիչներ, ընդունել է հետևյալը.

1. արժեթղթերի առկայությունը և դրանց սահմանաչափը,
2. մեկից ավելի աղբյուրից ստացված աշխատանքի վարձատրությունը,
3. առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցությունը,
4. առևտրային կազմակերպությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում ներկայացվածությունը,
5. անհատ ձեռնարկատեր հանդիսանալը:

Ի լրումն թվարկվածի՝ ուսումնասիրության ընթացքում իբրև ռիսկային ցուցիչ դիտարկվել է նաև բաց աղբյուրների միջոցով բացահայտման ենթակա տեղեկատվությունը՝ կարգավիճակով չպայմանավորված այլ պաշտոն զբաղեցնելու դեպքերի վերաբերյալ:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԸ

Մշտադիտարկումն իրականացվել է չորս փուլով.

1. տվյալների հավաքագրում,
2. տվյալների ուսումնասիրություն,
3. տվյալների գնահատում և ամփոփում,
4. արդյունքների հրապարակայնության ապահովում:

1. Տվյալների հավաքագրում

Տվյալների հավաքագրումն իրականացվել է Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական շտեմարաններում, բաց աղբյուրներում, մեդիահրապարակումներում, ինչպես նաև հայտարարագրերի համակարգում առկա վերաբերելի տեղեկությունների հավաքագրման միջոցով:

Տվյալների հավաքագրման փուլում պաշտոնատար անձանցից, այլ գերատեսչություններից հայցվել են վերաբերելի տեղեկություններ և/կամ պարզաբանումներ: Պաշտոնատար անձի վերաբերյալ տվյալների հավաքագրումը համարվել է ավարտված, երբ առերևույթ խախտումը հաստատելու կամ խախտման բացակայությունն ապացուցելու համար անհրաժեշտ բոլոր նյութերն ապահովված են եղել:

2. Տվյալների ուսումնասիրություն

Հավաքագրված տվյալների ուսումնասիրությունն իրականացվել է տվյալների համակողմանի վերլուծության, դրանց համադրման միջոցով:

Տվյալների ուսումնասիրությունը սկսվել է Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական շտեմարաններից ստացված տեղեկությունների ուսումնասիրությունից՝ արդյունքները համադրելով մեդիահրապարակումների և բաց աղբյուրներում առկա տեղեկությունների հետ: Ըստ անհրաժեշտության՝ ուսումնասիրվել են նաև պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկություններ:

3. Տվյալների գնահատում/ամփոփում

Ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված տեղեկությունները վերլուծվել են՝ առերևույթ խախտման հիմքերը գնահատելու նպատակով: Մշտադիտարկումը սահմանված ժամկետում իրականացնելու նպատակով՝ բոլոր անձանց վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունների արդյունքներն ամփոփվել են և ներկայացվել Հանձնաժողովի նիստերում:

4. Հրապարակայնության ապահովում

Մշտադիտարկման գործընթացի հրապարակայնությունն ու թափանցիկությունն ապահովելու նպատակով՝ Մշտադիտարկման պլանը և գործընթացի մանրամասները հրապարակվել են Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում՝ հետևյալ հղումով՝ http://cpcarmenia.am/hy/news/item/2023/11/24/1/:

Մշտադիտարկման ամփոփումը ևս հրապարակման ենթակա փաստաթուղթ է:

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ[1]

Հաշվի առնելով, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնավարման ընթացքում տարեկան հայտարարագրերը Հանձնաժողով ներկայացնում են մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա մայիսի 31-ը՝ Մշտադիտարկման գործընթացի արդյունավետությունը ապահովելու, ինչպես նաև առավել ամբողջական տվյալներ ներառելու նպատակով գործընթացը սկսվել է տարեկան հայտարարագրերի հրապարակումից հետո:

Այսպիսով, անհամատեղելիության պահանջների մշտադիտարկումը սկսվել է 2023 թվականի հունիսի 10-ից՝ հայտարարագրերի հանձնման գործընթացն ավարտելուն զուգահեռ:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՄՓՈՓՈՒՄ

2024 թվականի մարտին Մշտադիտարկման արդյունքում թվով 108 հանրային պաշտոն զբաղեցնող անձի վերաբերյալ իրականացված ուսումնասիրություններն ամբողջությամբ ավարտվել են և արդյունքներն ամփոփվել են:

Այսպես, նախնական ուսումնասիրության արդյունքում՝ հանրային պաշտոն զբաղեցնող թվով 108 անձանցից 49-ի շահերի հայտարարագրերի և պետական գրանցամատյաններում առկա տվյալների համադրության արդյունքում դուրս են բերվել առերևույթ անհամապատասխանություններ կամ պարզաբանման ենթակա հարցեր, որոնց առնչությամբ ապահովվել է անհրաժեշտ կապը պաշտոնատար անձանց հետ, իսկ 59-ի մոտ որևէ անհամապատասխանություն չի արձանագրվել:

[1] Մշտադիտարկման պլանով նախանշված ժամկետները ունեցել են որոշակի շեղումներ՝ կապված այլ մարմիններից, պաշտոն զբաղեցնող անձանցից հայցված տվյալների ուշացման և այլնի հետ:

Նախնական ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների և անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումների վերաբերյալ իրականացվել են մի շարք հարցումներ՝ խախտման առկայության փաստը հաստատելու կամ հերքելու նպատակով:

Մասնավորապես, բաց աղբյուրներից և տեղեկատվական շտեմարաններից ստացված տվյալները հաստատելու/ամբողջացնելու նպատակով կատարվել են հարցումներ Պետական եկամուտների կոմիտե, Կենտրոնական դեպոզիտարիա, ինչպես նաև պարզաբանումներ են հայցվել ուսումնասիրության սուբյեկտ հանդիսացող պաշտոնատար անձանցից:

Մշտադիտարկման շրջանակներում իրականացվել են հետևյալ հարցումները՝

1. Պետական եկամուտների կոմիտե՝ թվով 11 հարցում՝ 12 առևտրային ընկերությունների գործունեության դադարեցման հիմքերի և ժամկետների վերաբերյալ,

2. ուսումնասիրության սուբյեկտ հանդիսացած պաշտոնատար անձանց՝ թվով 44 հարցում, որոնց շրջանակներում տեղեկություններ են հայցվել հայտարարագրված այլ եկամուտների և այլ աղբյուրներից ստացված աշխատանքի վարձատրության վերաբերյալ, այն դեպքերում, եթե դրանց բնույթը նշված չի եղել, ինչպես նաև հավատարմագրային կառավարման պայմանագրերի վերաբերյալ,

3. Կենտրոնական դեպոզիտարիա՝ թվով 3 հարցում՝ պաշտոնատար անձանց՝ առևտրային արժեթղթերի առկայության վերաբերյալ:

<u>Անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման դեպքերի հիմքով վարույթների հարուցում</u>

Մշտադիտարկման արդյունքում՝ թվով **2** հանրային պաշտոն զբաղեցնող անձի մոտ արձանագրվել է անհամատեղելիության պահանջի առերևույթ խախտում, որոնց հիմքով Հանձնաժողովը հարուցել է համապատասխան վարույթ:

Սույն վարույթների համար հիմք է հանդիսացել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց՝ իրենց կարգավիճակով չպայմանավորված այլ պաշտոն զբաղեցնելու հանգամանքը:

Մասնավորապես, հանրային պաշտոն զբաղեցնող անձինք պաշտոնավարմանը զուգահեռ զբաղեցրել են համայնքի ավագանու անդամի պաշտոն: Առաջնորդվելով «Հանրային ծառայության մասին» օրենքով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ներկայացվող սահմանափակումներով և անհամատեղելիության պահանջներով՝ Հանձնաժողովը հանրային պաշտոնի և համայնքի ավագանու անդամի պաշտոնի մեկտեղման դեպքերը դիտարկել է հանրային/հանրային ծառայության պաշտոններին ներկայացվող պահանջների համատեքստում, որտեղ վերջիններիս՝ պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն զբաղեցնելու **արգելքը բացարձակ** է: Այսպես՝

1. Մշտադիտարկման շրջանակներում իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյանը հիմնական պաշտոնին զուգահեռ զբաղեցրել է նաև ավագանու անդամի պաշտոն, որի առնչությամբ 2023 թվականի նոյեմբերի 17-ին Հանձնաժողովի կողմից հարուցվել է համապատասխան վարույթ: Հանձնաժողովը վարույթի շրջանակներում պարզել է, որ Արմեն Կոտոյանը 2023 թվականի հոկտեմբերի 10-ից այլևս չի զբաղեցնում ավագանու անդամի պաշտոնը: Հիմք ընդունելով խախտման՝ փաստացի վերացված լինելու հանգամանքը և առաջնորդվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի կարգավորումներով առ այն, որ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարույթը կարող է կարճվել, եթե անձը վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ՝ Հանձնաժողովը 2024 թվականի հունվարի 24-ին ընդունել է վարույթը կարճելու վերաբերյալ որոշում:

2. Մյուս ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Վաղարշակ Ամիրխանյանը հիմնական պաշտոնին զուգահեռ զբաղեցրել է նաև ավագանու անդամի պաշտոն, որի առնչությամբ 2023 թվականի նոյեմբերի 17-ին հարուցվել է համապատասխան վարույթ: Հանձնաժողովը վարույթի շրջանակներում գնահատել է, որ Վաղարշակ Ամիրխանյանի կողմից ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները վերացնելու ուղղությամբ, մասնավորապես, 2023 թվականի դեկտեմբերի 12-ին վերջինս փաստացի դադարեցրել է ավագանու անդամի պաշտոնում պաշտոնավարումը: Հիմք ընդունելով խախտման՝ փաստացի վերացված լինելու հանգամանքը՝ Հանձնաժողովը 2023 թվականի դեկտեմբերի 27-ին ընդունել է վարույթը կարճելու վերաբերյալ որոշում:

ԱՄՓՈՓ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. 1 ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԴՐԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՀԱՍԿՈՂԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Հանրային ծառայության մասին» օրենքի կարգավորումները՝ Մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրվել են պաշտոն զբաղեցնող անձանց կողմից առևտրային կազմակերպություններում ունեցած մասնակցությունը կամ դրանց վարչական և վերահսկողական մարմիններում ներկայացվածությունը:

Մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է՝

- 108 պաշտոնատար անձանցից 57-ը առևտրային կազմակերպություններում երբևէ մասնակցություն կամ ներկայացվածություն չեն ունեցել:

- Թվով 51 պաշտոնատար անձի անվամբ գրանցված են եղել առևտրային կազմակերպություն կամ ԱՁ, որից 8 դեպքում առևտրային կազմակերպություններում պաշտոնատար անձանց ունեցած բաժնեմասերը հանձնված են եղել հավատարմագրային կառավարման, իսկ 43-ը դադարեցրել են առևտրային կազմակերպության գործունեությունը կամ ԱՁ-ն հանվել է պետական հաշվառումից:

Մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ ուսումնասիրության շրջանակում ներառված պաշտոն զբաղեցնող անձանց 52.7 %-ը երբևէ ներգրավված չեն եղել բիզնես գործընթացներում, իսկ՝ 47.3 %-ը թեև ունեն կամ ունեցել են բաժնեմասնակցություն/ներկայացվածություն տարբեր առևտրային կազմակերպություններում կամ հանդիսացել են անհատ ձեռնարկատեր, այդուհանդերձ, պահպանել են «Հանրային ծառայության մասին» օրենքի պահանջները՝ պաշտոնի ստանձնումից հետո սահմանված ժամկետում իրենց բաժնեմասերը հավատարմագրային կառավարման հանձնելով կամ բաժնեմասնակցությունը կամ ներկայացվածությունը դադարեցնելով, կամ ԱՁ-ն հաշվառումից հանելով:

Գործադիր իշխանության՝ կառավարության, կառավարության ենթակա մարմինների, վարչապետի ենթակա մարմինների ղեկավար կազմի անհամատեղելիության պահանջների մշտադիտարկում



1. 2 ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող, (…) զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ (…):

Նույն հոդվածի 8-րդ մասի 10-րդ ենթակետի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն չի համարվում Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա ֆոնդային բորսայում առևտրին թույլատրված արժեթղթեր ունենալը՝ նույն ընկերության կանոնադրական կապիտալում առավելագույնը մեկ տոկոս մասնակցության շրջանակներում:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավակարգավորումները՝ անհամատեղելիության պահանջների մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրվել է նաև պաշտոն զբաղեցնող անձանց առևտրային արժեթղթեր ունենալու հանգամանքը:

Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ 108 պաշտոնյայից միայն 4-ն են ունեցել առևտրային արժեթղթեր: սակայն օրենքով սահմանված արժեթղթերի քանակի թուլատրելի շեմը գերազանցված չի եղել, հետևապես, սույն հիմքով անհամատեղելիության պահանջների խախտում առկա չի եղել:

2. ԱՅԼ ՎՃԱՐՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար սահմանվել է այլ վճարովի աշխատանք կատարելու արգելք: Հաշվի առնելով սույն կարգավորումը՝ Հանձնաժողովը մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրել է նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից 2022 թվականի տարեկան հայտարարագրում հայտարարագրած այլ եկամուտները և այլ աշխատանքից ստացված վարձատրությունը:

Ուսումնասիրության շրջանակում այլ վճարովի աշխատանք կատարելու հանգամանքը պարզելու նպատակով հարցումներ են ուղարկվել թվով 35 պաշտոնատար անձի[2]:

Հարցումների արդյունքում ստացվել են պարզաբանումներ՝ կատարված այլ աշխատանքների և հայտարարագրված վարձատրությունների վերաբերյալ: Այսպես, ստացվել է՝

- թվով 21 հավաստող փաստաթուղթ՝ կրթական, գիտական կամ ստեղծագործական աշխատանք կատարելու վերաբերյալ,
- թվով 4 հավաստող փաստաթուղթ՝ գործուղման շրջանակներում ստացված եկամտի վերաբերյալ,
- թվով 7 դեպքում՝ տեղեկատվություն՝ եկամտահարկի ետվերադարձի վերաբերյալ,
- Եվս 4 դեպքում՝ տեղեկատվություն՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի վերաբերյալ, որոնք կնքված են եղել մինչև պաշտոնի ստանձնումը:
- թվով 4 դեպքում՝ տեղեկատվություն նախորդ աշխատատեղից վերջնահաշվարկ ստանալու վերաբերյալ:

Այսպիսով, հարցումների արդյունքում ստացված տեղեկատվության վերլուծության արդյունքում պաշտոնատար անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված այլ վճարովի աշխատանք կատարելու հիմքով անհամատեղելիության պահանջի խախտում չի արձանագրվել:

[2] Ստորև ներկայացված թվերի հանրագումարը չի կարող կազմել 35, քանի որ որոշ դեպքերում մեկ պաշտոնյային ուղարկվել է հարցում, որը ընդգրկել է մեկից ավել հարցադրումներ:


Այլ վճարովի աշխատանքի, այլ աղբյուրից ստացված աշխատանքի վարձատրության վիճակագրություն
20
5
2
7
2
Կրթական, գիտական և ստեղծագործական աշխատանքով զբաղվող
Գործուղման ծախսերին ուղղված եկամուտներ
Նախորդ պաշտոնից ստացված եկամուտներ
Եկամտահարկի ետվերադարձի գումար
Մինչ պաշտոնի ստանձնումը քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված եկամուտներ

3. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԱՅԼ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավադրույթը՝ Հանձնաժողովը անհամատեղելիության պահանջների մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրության առարկա է դարձրել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից իրենց կարգավիճակով չպայմանավորված այլ պաշտոնների զբաղեցման հանգամանքը, որի արդյունքում արձանագրվել է, որ ուսումնասիրության ենթակա պաշոն զբաղեցնող 108 անձանցից միայն երկուսն են, որ համատեղելիությամբ զբաղեցրել են այլ՝ համայնքային քաղաքական պաշտոն (ավագանու անդամ):

Վերոնշյալ անձանց նկատմամաբ հարուցվել է վարույթ: Վարույթների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է սույն փաստաթղթի՝ «ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՄՓՈՓՈՒՄ» բաժնում:

4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հանձնաժողովի կողմից 2023 թվականին իրականացված Մշտադիտարկման գործընթացի արդյունքում հարկ է արձանագրել, որ վերհանված անհամապատասխանությունները և արձանագրված խախտումներն ունեն որոշակի և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ պատճառներ:

Այսպես, պաշտոնատար անձանց կողմից ստացված պարզաբանումների՝ Հանձնաժողովին հասանելի պետական տեղեկատվական շտեմարաններում առկա տվյալների համալիր վերլուծությամբ պարզ է դառնում, որ առկա անհամապատասխանությունների հիմքում եղել են պաշտոնատար անձանց կողմից օրենսդրական կարգավորումների, հայտարարագրերի լրացման կարգի վերաբերյալ ոչ պատշաճ կամ ոչ բավարար իրազեկվածությունը, ինչպես նաև հայտարարագրման համակարգում առկա որոշ խնդիրները, որոնք հայտարարատու պաշտոն զբաղեցնող անձանց հնարավորություն չեն տվել մասնավորեցնել, օրինակ, ստացված այլ եկամուտները կամ այլ վճարովի աշխատանք կատարելու վերաբերյալ նկարագրերը:

Բացի վերոգրյալից, այլ պաշտոններ զբաղեցնելու դեպքերում առկա են եղել «Հանրային ծառայության մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքների համապատասխան կարգավորումների մեկնաբանման շուրջ որոշակի տարընկալումներ:

Անհրաժեշտ է արձանագրել նաև, որ բոլոր դեպքերում, երբ պաշտոն զբաղեցնող անձինք հայտարարագրել կամ ներկայացրել են առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում իրենց ունեցած բաժնեմասերի հավատարմագրային կառավարման վերաբերյալ տեղեկություններ, այդ կազմակերպությունների կառավարման կամ հավատարմագրային կառավարչի նկատմամբ վերջիններիս փաստացի ազդեցություն ունենալու հանգամանքը Հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել գնահատելու՝ պայմանավորված առկա օրենսդրական կարգավորումների խոցելիությամբ և անկատարությամբ: Թեև «Հանրային ծառայության մասին» օրենքի՝ 2022 թվականի դեկտեմբերի 7-ի փոփոխությունների արդյունքում որոշակիորեն վերանայվեցին

հավատարմագրային կառավարման գործընթացին ներկայացվող պահանջները և սահմանվեց, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին արգելվում է որևէ ձևով ազդեցություն գործել հավատարմագրային կառավարչի վրա կամ միջամտել հավատարմագրային կառավարման գործընթացին, դրա վերահսկման օրենսդրական մեխանիզմները և համապատասխան գործիքակազմը բացակայում են: Ուստի, այս խնդիրներն անհրաժեշտ է հասցեագրել ոլորտային օրենսդրության հետագա փոփոխությունների շրջանակներում: